



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի խորհրդի 28.08.2012 թ. № 09-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՍԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ԴԻՍՈՒՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(AMICUS CURIAE)**

№ 09-12-Ա

ք.Երևան

28.08.2012 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Չոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ Արտակ Չեյնալյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերի վերլուծության հարցերի հանձնաժողովի նախագահ Վահե Գրիգորյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության և 9-րդ մասի 1-ին պարբերության, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

Հարցի կարևորությունը.

Կենսաթոշակի՝ թոշակառուին անկանխիկ վճարման իրավակարգավորումների սահմանադրականության հարցն իրենից լուրջ

կարևորություն է ներկայացնում անձի սոցիալական ապահովության իրավունքի պաշտպանության տեսանկյունից: Կենսաթոշակի իրավունքը իր պաշտպանությունն է գտել Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության մասին միջազգային դաշնագրում: Այդ իրավունքների իրականացումն ապահովելու համար մեկնաբանություններ է կատարել ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհուրդը: Վերջինս անդրադարձել է սոցիալական ապահովության իրավունքի անշեղորեն իրականացման, պետությունների պարտավորությունների, այդ պարտավորությունները չկատարելու հետևանքով առաջացող խախտումներին և դրանց բացառման խնդիրներին:

Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).

Սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելիս, իրավունքի աղբյուր են ծառայել հիմնականում միջազգային փաստաթղթերում ձևակերպված դրույթները, մասնավորապես՝ ուսումնասիրության եզրահանգումները բխում են քննարկվող հարցերի կապակցությամբ Սոցիալական համախմբվածության Եվրոպական կոմիտեի, ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհրդի մեկնաբանությունների հետազոտությունից: Միջազգային փաստաթղթերում ձևակերպվել է պետությունների՝ սոցիալական ապահովության իրավունքի անխախտ իրականացումն ապահովելու պարտավորությունը:

Սույն մեկնաբանությունների մեջ ներկայացվում են՝

- սոցիալական ապահովության իրավունքի էությունը և պաշտպանության հիմքերը,
- սոցիալական ապահովության իրավունքի առնչությամբ պետությունների պարտավորությունները,
- պետությունների կողմից թույլ տրվող սոցիալական ապահովության իրավունքի տիպական խախտումները,
- սոցիալական ապահովության ազգային համակարգը միջազգային ընդունված նորմերին համապատասխան կառուցելու պետությունների պարտավորությունները,
- սոցիալական ապահովության իրավունքի պաշտպանությունը՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի,
- պաշտոնական փաստաթղթերի ճանաչման և ընդունման կարգը :

I. Սոցիալական ապահովության իրավունքի էությունը և պաշտպանության հիմքերը.

ա) Սոցիալական ապահովության իրավունքի էությունը և միջազգային պայմանագրերը.

Սոցիալական ապահովության ծրագրեր ներդնելու հիմնավորումները

տարբեր երկրներում տարբեր են: Դրան վերաբերող օրենսդրության անհրաժեշտությունը պայմանավորված է սոցիալական արդարությամբ կամ սոցիալական հավասարությամբ, ինչպես նաև՝ սոցիալական և քաղաքական կայունության ապահովմամբ:

Հաճախ տարբերակվում են «սոցիալական ապահովությունը» (social security) և «սոցիալական բարեկեցությունը» (social welfare): Նման դասակարգման միջոցով փորձ է արվում սոցիալական ապահովության արտոնությունները տարանջատել որոշակի կարիքից բխող պետական միջոցներից ստացած օգնությունից, ինչը գոյանում է որևէ անհատի կամ խմբի հարկային եկամուտներից: Շատ դեպքերում «սոցիալական ապահովություն» եզրը գործածվում է ընդհանուր իմաստով՝ ներառելով թե՛ «սոցիալական ապահովագրությունը», և թե՛ «սոցիալական օգնությունը»¹:

Սույն մեկնաբանության մեջ «սոցիալական ապահովությունը» գործածվում է լայն իմաստով, որն իր մեջ ներառում է այս երկու ասպեկտները:

Սոցիալական ապահովության իրավունքը երաշխավորված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (այսուհետ՝ Հռչակագիր) 22-րդ հոդվածով, իսկ սոցիալական ապահովության տարբեր ձևերը ճանաչվում են նաև 25(1) հոդվածով: Սակայն, Հռչակագրի հեղինակները չեն սահմանել սոցիալական և տնտեսական իրավունքների նվազագույն շեմը, որն անհրաժեշտ է անհատի արժանապատվության և անձնական զարգացման համար²: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) 9-րդ հոդվածը ճանաչում է սոցիալական ապահովության յուրաքանչյուրի իրավունքը: Դաշնագրի տեքստը, սակայն, սոցիալական ապահովության իրավունքը ընդհանրական ձևակերպմամբ է երաշխավորում, ինչը կարելի է բացատրել այս ոլորտում Աշխատանքի միջազգային կազմակերպության բավականաչափ լավ մշակված չափորոշիչների առկայությամբ, և այդ չափորոշիչների սահմանումն ու դրանց իրականացումը շարունակելու վերջինիս միտումով: Սոցիալական ապահովության իրավունքը երաշխավորող դրույթներ պարունակում են նաև «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» և «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիաներում³:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան նույնպես ճանաչում է սոցիալական ապահովություն ստանալու յուրաքանչյուր երեխայի իրավունքը,

¹ Տնտեսական, Սոցիալական և Մշակութային իրավունքներ, Դասագիրք, Երկրորդ, լրամշակված հրատարակություն, Ասբյորն Էյդեի, Կատարինա Կրաուզեի և Ալան Ռոուզի խմբագրությամբ, Երևան-2009, էջ. 300:

² Տնտեսական, Սոցիալական և Մշակութային իրավունքներ, Դասագիրք, Երկրորդ, լրամշակված հրատարակություն, Ասբյորն Էյդեի, Կատարինա Կրաուզեի և Ալան Ռոուզի խմբագրությամբ, Երևան-2009, էջ. 303:

³ International Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women, adopted 18 Dec. 1979, entered into force 3 Sept. 1981, G.A. Res. 34/180, 34 UN GAOR, Supp. (No.46), UN Doc. A/34/46, at 193 (1979).:

ինչպես նաև բավարար կենսամակարդակի իրավունքը՝ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար⁴:

Սոցիալական ապահովության վերաբերյալ դրույթներ է պարունակում նաև Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան⁵:

բ) Սոցիալական ապահովության պաշտպանության տարածքային պայմանագրերը.

Սոցիալական ապահովության իրավունքի վերաբերյալ դրույթներ պարունակվում են նաև մի շարք տարածքային փաստաթղթերում: Այդպիսի փաստաթղթերից են Մարդու իրավունքների և պարտականությունների մասին Ամերիկյան հռչակագիրը⁶ և Մարդու իրավունքների Ամերիկյան Կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը⁷:

Եվրոպական սոցիալական խարտիայում (այսուհետ՝ Խարտիա) պարունակվում են բարեփոխումների լավագույն չափանիշները: Խարտիայի 12-րդ հոդվածը պարտավորություն է դնում պետությունների վրա՝ ստեղծելու կամ պահպանելու սոցիալական ապահովության համակարգ⁸:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան ընդունել է առավել ամբողջական մոտեցում սոցիալական ապահովության վերաբերյալ՝ աղքատության և սոցիալական բացառման պաշտպանության համատեքստում՝ դրանով իսկ կարևորելով սոցիալական ապահովության սոցիալական և ինտեգրման դերն ու նշանակությունը: Վերանայված եվրոպական խարտիայի 30-րդ հոդվածը նախատեսում է աղքատությունից և սոցիալական բացառումից պաշտպանության իրավունքը, իսկ 14-րդ հոդվածը պաշտպանում է սոցիալական բարեկեցության իրավունքը⁹:

Վերոհիշյալ դրույթները պարտավորեցնում են պետություններին ապահովել սոցիալական ապահովության համակարգ, սակայն թույլատրվում է որոշակի բազմազանություն՝ ելնելով պետության ազգային քաղաքականությունից: Բայցևայնպես, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն հստակեցրել է, որ *«առաջնային այն է, որպեսզի սոցիալական ապահովության համակարգերը համապատասխանեն բնակչությանը պաշտպանելու պարտականությանը»*, որը ցույց է տալիս, որ

⁴ Convention on the Rights of the Child, adopted 20 Nov.1989, entered into force 2 Sep.1990, G.A. Res. 44/25, 44 UN GAOR, Supp. (No.49), UN Doc. A/44/49, at 166 (1989):.

⁵ International Convention on the Protection of the Rights of All Migrant Workers and Members of their Families, adopted 18 Dec. 1990, entered into force 19 March 2003, G.A. Res. 45/158:.

⁶ American Declaration of the Rights and Duties of Man, signed 2 May 1948, OEA/Ser.L./11.71, at 17 (1988):.

⁷ Additional Protocol to the American Convention on Human Rights in the Area of Economic Social and Cultural Rights (Protocol of San Salvador), adopted 17 Nov. 1988, entered into force 16 Nov. 1999, OASTS 69:

⁸ European Social Charter, signed 18 Oct. 1961, entered into force 26 Feb. 1965, 529 UNTS 89, ETS 35:

⁹ EU-CHINA HUMAN RIGHTS NETWORK, Working paper on the Right to Social Security, Network Seminar on Human Rights, University of Essex, Colchester. U.K. 27-28 April, 2004, page 5:

«պետք է ղեկավարությանն ուղղորդել առավել ուշադրության արժանացնելու սոցիալական ապահովության համակարգի հետևանքներին՝ հասարակության բոլոր անդամների ապրուստի նվազագույն պայմանների ապահովման նպատակով»¹⁰:

գ) Սոցիալական ապահովության իրավունքի կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում.

Հայաստանի Հանրապետությունում պետական կենսաթոշակ հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը սահմանվում են «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված օրենքով:

Դիմումատուի կողմից վիճարկվում են հետևյալ իրավական նորմերը.

Հոդված 35. Կենսաթոշակի վճարումը

6. Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակատուն պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ պատշաճ կարգով բանկին ներկայացնել իր ողջ լինելու մասին Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստաթուղթը կամ ներկայանալ բանկ և հայտարարություն տալ իր ողջ լինելու մասին: ...

9. Կենսաթոշակը նաև վճարվում է կենսաթոշակատուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակատուի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) կողմից Հայաստանի Հանրապետությունում տրված և Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով, եթե այդ մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում: ...

Հոդված 41. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը և վերականգնելը, կենսաթոշակ վճարելը դադարեցնելը և վերսկսելը

2. Կենսաթոշակ վճարելը դադարեցվում է՝

...3) սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով փաստաթուղթ չներկայացնելու կամ հայտարարություն չտալու դեպքում:

II. Սոցիալական ապահովության իրավունքի առնչությամբ պետությունների պարտավորությունները.

Դաշնագրի 9-րդ հոդվածը սահմանում է, որ «անդամ-պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի սոցիալական ապահովության, այդ թվում՝ սոցիալական ապահովագրության, իրավունքը»¹¹: Սոցիալական ապահովության իրավունքն ունի առաջնային կարևորություն՝ յուրաքանչյուր անձի

¹⁰ EU-CHINA HUMAN RIGHTS NETWORK, Working paper on the Right to Social Security, Network Seminar on Human Rights, University of Essex, Colchester. U.K. 27-28 April, 2004, page 5:

¹¹ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, հոդված 9:

արժանապատվության երաշխավորման գործում, երբ նրանք բախվում են այնպիսի հանգամանքների հետ, որոնք զրկում են նրանց ամբողջությամբ իրականացնելու Դաշնագրով սահմանված իրավունքները:

Սոցիալական ապահովության իրավունքը ներառում է կենսաթոշակ ստանալու և պահպանելու իրավունքը՝ կանխիկ կամ այլ տարբերակով, և առանց խտրականության, ինչն էլ կապահովի պաշտպանությունը՝

1. հիվանդության պատճառով աշխատանքի եկամուտների բացակայության, հաշմանդամության, մայրության, աշխատանքի ընթացքում ձեռք բերած վնասվածքների, գործազրկության, ծերության կամ ընտանիքի անդամի մահվան դեպքերում,

2. բժշկական օգնության մատչելիության դեպքում,

3. ընտանիքի օժանդակության անբավարարության, մասնավորապես մեծահասակների և երեխաների խնամքի դեպքերում:

Դաշնագրի 2(1) հոդվածի համաձայն՝ *Դաշնագրի անդամ պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցներ՝ օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները՝ իրականացնելու բոլոր անձանց սոցիալական ապահովության իրավունքներն ամբողջությամբ՝ առանց որևէ խտրականության:*

Դաշնագրի 9-րդ հոդվածը սահմանում է, որ *միջոցները, որոնք պետք է օգտագործվեն սոցիալական ապահովության կենսաթոշակները տրամադրելու համար, չեն կարող նեղ սահմանվել, և ցանկացած դեպքում պետք է երաշխավորեն բոլոր անձանց նվազագույն իրավունքների իրականացումը*¹²:

Սոցիալական ապահովության իրավունքի կարևորագույն տարրերից է սոցիալական ապահովության մատչելիությունը:

Սոցիալական համախմբվածության Եվրոպական կոմիտեն սոցիալական ապահովության մատչելիության վերաբերյալ արձանագրել է, որ «Եվրոպական խորհրդի սոցիալական համախմբվածության ռազմավարության հիմնապայուններից մեկը, որը 2001 թվականին իր հաստատումն է ստացել Նախարարների խորհրդի կողմից, հանդիսանում է բոլորի սոցիալական իրավունքների արդյունավետ մատչելիության խթանումը՝ պատշաճ ձևով հաշվի առնելով այն անձանց համապատասխան ուշադրության արժանացնելը, ովքեր գտնվում են խոցելի վիճակում, հանդիպում են դժվարությունների այս իրավունքների իրականացման գործում»¹³:

Սոցիալական համախմբվածության Եվրոպական կոմիտեն 2003 թվականի մայիսի 20-22-ը տեղի ունեցած 10-րդ ժողովում հաստատեց սոցիալական իրավունքների բարելավմանն ուղղված Առաջարկությունների նախագիծը, որով *կոչ է արվում անդամ պետություններին իրականացնել սոցիալական իրավունքների մատչելիության բարելավումներ՝ մասնավորապես ելնելով*

¹² ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհուրդ, Ընդհանուր մեկնաբանություններ, Սոցիալական ապահովության իրավունքը, ընդունված 23.11.2007թ, էջ. 2

¹³<https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=51649&Site=CM&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383>, § 2

խտրականությունների արգելքի սկզբունքից¹⁴:

Դրանով իսկ, պետությունների վրա հստակորեն դրվեց պոզիտիվ պարտավորություն՝ մշակելու իրենց սոցիալական ապահովության մատչելի համակարգ, որը կապահովի իրավունքներից՝ առանց խոչընդոտների օգտվելու հնարավորությունը:

Այսպիսով, սոցիալական ապահովության իրավունքի իրացումը պահանջում է, որպեսզի համակարգը լինի մատչելի՝ կենսաթոշակները համապատասխան սոցիալական ռիսկերի և խավերի անձանց տրամադրելու համար: Համակարգը պետք է հիմնված լինի ներպետական օրենսդրության վրա, և *տեղական իշխանությունները պետք է ապահովեն համակարգի կառավարման կամ վերահսկման արդյունավետությունը:* Համակարգերը նաև պետք է կայուն լինեն, այդ թվում՝ կենսաթոշակների տրամադրման գործում, որպեսզի ապահովվի այդ իրավունքի իրականացումը ներկայիս և ապագա սերունդների համար:

Անդամ պետությունները՝ իրենց վարքագծի՝ ընդհանուր և հատուկ պարտավորություններին համապատասխանությունն ապացուցելու համար պետք է ցույց տան, որ իրենք ձեռնարկել են իրենց տրամադրության տակ եղած բոլոր անհրաժեշտ քայլերը՝ սոցիալական ապահովության իրավունքի իրականացման համար, և երաշխավորել են, որ այդ իրավունքներն իրականացվեն առանց որևէ խտրականության: Միջազգային իրավունքի համաձայն՝ այդպիսի քայլեր չձեռնարկելը և բարեխղճորեն չգործելը հանգեցնում է Դաշնագրի խախտման:

Պետությունների կողմից գործողություն ձեռնարկելու պարտավորությունը գնահատելիս Կոմիտեն դիտարկում է, թե ***արդյոք իրականացումը ողջամիտ կամ համաչափ է նպատակին, համապատասխանում է արդյոք մարդու իրավունքներին և ժողովրդավարական սկզբունքներին:***

Սույն դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը հանդիսանում է սոցիալական ապահովության իրավունքի կարևորագույն բաղադրատարրը: ***Հայաստանի Հանրապետությունը պատշաճորեն չի կատարել իր պոզիտիվ պարտավորությունները՝ առանց որևէ խտրականության կենսաթոշակ ստանալու իրավունքի անխոչընդոտ իրականացումը երաշխավորելու համար:*** Պետությունը անհամաչափ բեռ է դրել Հայաստանի Հանրապետությունում չգտնվող և անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց վրա՝ հանգեցնելով հավասարության սկզբունքի խախտման: Այս առումով խախտվում է նաև սոցիալական ապահովության կարևորագույն տարրերից մեկը՝ մատչելիության սկզբունքը, գործնականում անձը զրկվում է իր կենսաթոշակը ստանալու հնարավորությունից: Գործող իրավակարգավորման պարագայում չի ապահովվել պետության պարտավորությունը՝ ձեռնարկելու իր տրամադրության տակ եղած բոլոր անհրաժեշտ միջոցները՝ սոցիալական ապահովության իրավունքի իրականացման համար, և երաշխավորելու, որ այդ

¹⁴<https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=51649&Site=CM&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383>, § 9

իրավունքն իրականացվի առանց որևէ խտրականության և հավասարապես բոլորի համար:

III. Պետությունների կողմից թույլ տրվող սոցիալական ապահովության իրավունքի խախտումների տեսակները.

Սոցիալական ապահովության իրավունքը կարող է խախտվել անմիջականորեն անդամ պետության գործունեության կամ նրա այն մարմինների կողմից, որոնք չեն գործում պետության անունից:

Խախտումները ներառում են, օրինակ,

- ռեգրեսիվ միջոցների կիրառումը, որոնք անհամատեղելի են հիմնական պարտականությունների հետ,

- սոցիալական ապահովության շարունակական իրականացման համար անհրաժեշտ օրենսդրության պաշտոնական հետաձգումը կամ կասեցումը,

- ակտիվ աջակցություն այն միջոցներին, որոնք ընդունվել են երրորդ անձանց կողմից, և որոնք անհամատեղելի են սոցիալական ապահովության իրավունքի հետ¹⁵:

«Խախտումներն առաջանում են նաև օրենսդրական բացերի պատճառով: Այսպես, օրինակ, խախտումներ օրենսդրական բացերի միջոցով կարող են առաջանալ, երբ անդամ պետությունը զերծ է մնում բավարար և համապատասխան միջոցներ ձեռարկելուց՝ սոցիալական ապահովության իրավունքն իրականացնելու համար: Սոցիալական ապահովության իրավունքի համատեքստում այդպիսի խախտումների օրինակ կարող է լինել.

- յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքի իրականացման գործում համապատասխան միջոցների ձեռնարկումից զերծ մնալը,

- *համապատասխան օրենքների կիրառումից կամ այնպիսի քաղաքականություն գործողության մեջ դնելուց զերծ մնալը, որն անհրաժեշտ է սոցիալական ապահովության իրավունքի իրականացման համար;*

- պետական կենսաթոշակային համակարգերի ֆինանսական կայունության ապահովումից ձեռնպահ մնալը;

- *այնպիսի օրենսդրության բարեփոխումներ կատարելուց կամ գործող իրավական ակտեր ուժը կորցրած ճանաչելուց խուսափելը, որոնք ակնհայտորեն հակասում են սոցիալական ապահովության իրավունքին;*

- սոցիալական ապահովության իրավունքի խախտումները կանխելու համար անհատների կամ անձանց խմբերի գործունեությունը կարգավորելուց ձեռնպահ մնալը;

- այնպիսի խոչընդոտների անհապաղ վերացումից խուսափելը, որոնք պետությունը պարտավոր է վերացնել՝ Դաշնագրով սահմանված իրավունքի անհապաղ իրականացման համար;

- պետության կողմից Դաշնագրով սահմանված պարտավորությունները

¹⁵ ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհուրդ, Ընդհանուր մեկնաբանություններ, Սոցիալական ապահովության իրավունքը, ընդունված 23.11.2007թ, էջ. 17

հաշվի առնելուց հրաժարվելը՝ այլ պետությունների հետ երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնագրերի, միջազգային կազմակերպությունների կամ բազմազգ կորպորացիաների միանալիս»¹⁶:

Փաստորեն, խախտումների առաջացման հիմնական պատճառը կապված է օրենսդրական բացերի, այդ բացերը լրացնելու, բարեփոխումներ կատարելուց հրաժարվելու հետ:

Այսպիսով, պետության վրա դրված է օրենսդրական բարեփոխումներ կատարելու, կամ սոցիալական ապահովության իրավունքին հակասող դրույթը վերացնելու հստակ պարտավորություն: Հայաստանի Հանրապետությունը, սահմանելով այնպիսի դրույթ, որը ստիպում է անձին տարին առնվազն մեկ անգամ գալ Հայաստան և ներկայացնել իր ողջ լինելու փաստը հավաստող, ՀՀ նոտարի կողմից հաստատված փաստաթուղթ, ակնհայտորեն հանգեցնում է սոցիալական ապահովության իրավունքի խախտման:

Սոցիալական ապահովության իրավունքի իրացումն ապահովելու համար պետությունը նախ և առաջ պարտավորություն է կրում վերացնելու այն նորմերը, որոնք այդ իրավունքի իրականացման ճանապարհին խոչընդոտներ են ստեղծում: Իսկ այդպիսի նորմերը փոփոխելուց կամ վերացնելուց հրաժարվելն առաջացնում է որոշակի դիտավորություն, ինչն անհամատեղելի է անձի՝ սոցիալական ապահովման իրավունքի հետ:

IV. Սոցիալական ապահովության ազգային համակարգը միջազգային ընդունված նորմերին համապատասխան կառուցելու պետությունների պարտավորությունները.

Դաշնագրի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դաշնագրով սահմանված պարտավորություններն իրականացնելիս անդամ-պետությունները պարտավոր են կիրառել բոլոր **անհրաժեշտ միջոցները**, մասնավորապես՝ օրենսդրական բարեփոխումների ընդունումը: Յուրաքանչյուր պետության ընձեռված է գնահատման որոշակի հայեցողության շրջանակ՝ կոնկրետ հանգամանքներում առավել հարմար միջոցների ընտրության հարցում: Դաշնագիրը, այնուամենայնիվ, յուրաքանչյուր անդամ պետության վրա անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու հստակ պարտավորություն է սահմանում, որպեսզի յուրաքանչյուր ոք հնարավորինս շուտ օգտվի իր սոցիալական ապահովության իրավունքներից:

Անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, ինչպիսիք են օրենսդրությունը, ռազմավարությունը, քաղաքականությունը կամ ծրագրերը՝ համոզվելու համար, որ սոցիալական ապահովության իրավունքի հետ կապված հատուկ պարտավորությունները կիրականացվեն: ***Առկա օրենսդրությունը, ռազմավարությունը և քաղաքականությունը պետք է վերանայվեն, որպեսզի ապահովվի դրանց համապատասխանությունը սոցիալական ապահովության իրավունքից բխող***

¹⁶ ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհուրդ, Ընդհանուր մեկնաբանություններ, Սոցիալական ապահովության իրավունքը, ընդունված 23.11.2007թ, էջ. 17-18

պարտավորություններին, և պետք է վերացվեն, լրացվեն կամ փոփոխվեն, եթե չեն համապատասխանում Ղաշնագրի պահանջներին:

Սոցիալական ապահովության համակարգերը պետք է պարբերաբար դիտարկվեն՝ վերջիններիս կայունության ապահովման համար: Միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը միանշանակ ենթադրում է, որ անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել ազգային ռազմավարության և գործունեության պլան՝ սոցիալական ապահովության իրավունքի ապահովման համար, քանի դեռ պետությունը հստակորեն ցույց չի տալիս, որ տեղում ունի սոցիալական ապահովության ամբողջական համակարգ, և պարբերաբար այն վերանայում է՝ համոզվելու համար սոցիալական ապահովության իրավունքի հետ նրա համապատասխանությանը: Ռազմավարությունը և գործողությունների պլանը պետք է հանգամանքների հետ ողջամտորեն համադրված լինեն, պետք է հաշվի առնվեն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները և առավել անբարենպաստ վիճակում գտնվող և ամենախոցելի խմբերի իրավունքները, պետք է հիմնվեն մարդու իրավունքների և հիմնարար սկզբունքների վրա, ներառեն սոցիալական ապահովության իրավունքի բոլոր ասպեկտները; սահմանեն ձեռքբերումները կամ այն նպատակները, որոնց պետք է հասնել և դրանց հասնելու ժամկետները: Սոցիալական ապահովման իրավունքի ձևավորման և իրականացման ընթացքում անհրաժեշտության դեպքում պետությունները պետք է օգտվեն ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների տեխնիկական աջակցությունից և համագործակցությունից: Սոցիալական ապահովության ռազմավարությունը և իրագործումը պետք է հիմնված լինի խտրականության արգելքի, գենդերային հավասարության և ժողովրդի մասնակցության սկզբունքների վրա: *Անհատների և խմբերի իրավունքը՝ մասնակցություն ունենալու որոշումների կայացման գործընթացներին, որոնք կարող են իրենց ազդեցությունն ունենալ սոցիալական ապահովության իրավունքի իրականացման գործում, պետք է սոցիալական ապահովությանը վերաբերող քաղաքականության, ռազմավարության կամ ծրագրերի մշակման անբաժանելի մասը կազմի:*

Սոցիալական ապահովության ազգային համակարգը և գործունեության պլանը և դրա իրագործումը պետք է հիմնված լինեն նաև հաշվետվության և թափանցիկության սկզբունքների վրա: Մարդկանց բոլոր իրավունքների արդյունավետ իրականացման համար կարևոր է նաև դատական համակարգի անկախությունը և արդյունավետ կառավարումը:

Այս առումով պետությունները կարող են նպատակահարմար գտնել ընդունելու կառուցողական օրենսդրություն՝ իրականացնելու համար սոցիալական ապահովության իրավունքը:

Այդպիսի օրենսդրությունը պետք է պարունակի.

ա) նպատակները, որոնց պետք է հասնել, և հասնելու համար անհրաժեշտ ժամկետները.

բ) այն միջոցները, որոնցով կարելի է հասնել նպատակին,

գ) քաղաքացիական հասարակության, մասնավոր սեկտորի և

միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակառոդովածությունը,

- դ) գործընթացի համար ինստիտուցիոնալ պատասխանատվությունը,
- ե) մշտադիտարկման համար անհրաժեշտ ազգային մեխանիզմները,
- զ) պաշտպանության միջոցները և վիճարկման ընթացակարգերը¹⁷:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությունը պետք է համապատասխանի միջազգայնորեն ընդունված սկզբունքներին և լինի կառուցողական: Այս առումով կառուցողական օրենսդրությունը պահանջում է, որպեսզի առաջնահերթ ներկայացվեն այն նպատակները, որոնց ձգտում է պետությունը, և այն միջոցները, որոնք անհրաժեշտ են այդ նպատակներին հասնելու համար: **Նպատակը** սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը երաշխավորելն է: Իսկ այդ նպատակին հասնելու համար պետք է ընտրված լինեն ողջամիտ միջոցներ: Իսկ այն կարգավորումը համաձայն որի՝ անձը պետք է ներկայանա ՀՀ և այստեղի նոտարի կողմից հաստատված փաստաթուղթ ներկայացնի՝ իր ողջ լինելու փաստը հաստատելու համար, չի համապատասխանում նպատակին, և ընդհակառակը՝ լուրջ խոչընդոտներ է ստեղծում սոցիալական ապահովման իրականացման գործում: Այն դեպքում, երբ օրենսդիրը սահմանում է կենսաթոշակների ստացման անկանխիկ եղանակ, ապա պետք է նաև ձեռք առնի ողջամիտ քայլեր, մշակի առավել դյուրին ընթացակարգ՝ այդ եղանակով կենսաթոշակ ստանալու հնարավորությունն ապահովելու համար:

Այս դեպքում նաև որոշակի առումով հարց է առաջանում, եթե սահմանված է անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստանալու հնարավորություն, ապա որքանով է արդարացված անձի վրա դնել յուրաքանչյուր տարի ՀՀ ներկայանալու այդպիսի անհամաչափ բեռ, որը լուրջ սոցիալական խնդիրներ կարող է առաջացնել հատկապես անապահով ընտանիքների համար:

V. Սոցիալական ապահովության իրավունքի պաշտպանությունը՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի.

Սոցիալական ապահովության (սոցիալական բարեկեցության) իրավունքը պաշտպանվում է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա): Եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում անդրադարձել է նաև կենսաթոշակների խնդրին՝ համարելով, որ անձը կենսաթոշակի նկատմամբ ունի **սեփականության իրավունք**, իսկ այս իրավունքը սահմանափակելը, կամ նվազ չափով կենսաթոշակ տրամադրելը հանդիսանում է Կոնվենցիայի խախտում: Կոնվենցիային կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ **«սեփականություն»** հասկացությունն ունի ինքնավար

¹⁷ ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհուրդ, Ընդհանուր մեկնաբանություններ, Սոցիալական ապահովության իրավունքը, ընդունված 23.11.2007թ, էջ. 19

նշանակություն, այն չի սահմանափակվում ֆիզիկական բարիքների սեփականությամբ. որոշ **գույքային այլ իրավունքներ և շահեր** նույնպես կարող են համարվել «սեփականության իրավունքներ» և, հետևաբար, «սեփականություն» Կոնվենցիայի իմաստով¹⁸:

Ավելին, «սեփականություն» եզրույթը նշանակում է ոչ միայն «գոյություն ունեցող գույքը»¹⁹, այլև այն գույքը (իրավունքներն ու շահերը), որոնց նկատմամբ դիմումատուն առնվազն ողջամիտ կամ իրավաչափ սպասումներ կարող է դրսևորել²⁰:

Ըստ Դատարանի նախադեպային իրավունքի՝ սեփական գույքից անարգել օգտվելու իրավունքի վերաբերյալ իրավաչափ սպասումը պետք է ունենա բավարար հիմք ներպետական օրենսդրության տեսանկյունից²¹:

Սույն դեպքում կենսաթոշակը դասվում է գույքային այլ իրավունքների և շահերի շարքին: **Հետևաբար, կենսաթոշակի իրավունքը ևս հանդիսանում է «սեփականություն»՝ Կոնվենցիայի իմաստով:**

Այս պարագայում կենսաթոշակ ստանալու նկատմամբ այդ իրավունքներից օգտվող անձիք անկասկած ունեն ողջամիտ և իրավաչափ սպասումներ: Ճիշտ է, թեև պետությունը չի հրաժարվում այդ իրավունքները տրամադրելուց, սակայն ողջամիտ երաշխիքներ չի սահմանում առանց խոչընդոտի այդ իրավունքների իրականացման համար: ՀՀ ներպետական օրենսդրության մեջ առկա է մի դրույթ, որը չի համապատասխանում Եվրոպական դատարանի որդեգրած սկզբունքին և չի ապահովում կենսաթոշակից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ իրավաչափ սպասման վերաբերյալ ներպետական օրենսդրության բավարար հիմքի առկայությունը:

Ինչպես Կոնվենցիայի մի շարք հոդվածներ, այնպես էլ սեփականության պաշտպանության իրավունքը, բացարձակ չէ և պետություններին վերապահված է, որոշակի պայմանների առկայության դեպքում, սեփականության իրավունքին միջամտության հնարավորություն, այդ թվում նաև՝ սեփականությունից զրկելու հնարավորություն: Սեփականության իրավունքին միջամտությունը կարող է համատեղելի լինել Կոնվենցիայի 1-ի արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի առաջին նախադասությունում ամրագրված ընդհանուր նորմի հետ, միայն եթե ապահովված է **«արդարացի հավասարակշռություն»** հանրության ընդհանուր շահի և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև:

«Արդարացի հավասարակշռությունն» ապահովված է «միայն, երբ հաստատվում է, որ տվյալ միջամտությունը բավարարում է օրինականության

¹⁸ *Iatridis v. Greece [GC], no. 31107/96, para. 54; Öneriyıldız v. Turkey, § 124; Beyeler v. Italy [GC], no. 33202/96, ECHR 2000-I – (5.1.00)*

¹⁹ *Van der Musselle v. Belgium, judgment of 23 November 1983, Series A no. 70, p. 23, para. 48*

²⁰ *Pine Valley Developments Ltd and Others v. Ireland, judgment of 29 November 1991, Series A no. 222, p. 23, § 51, and Pressos Compania Naviera S.A. and Others v. Belgium, judgment of 20 November 1995, Series A no. 332, p. 21, para. 31*

²¹ *Kopeccky v. Slovakia, no. 44912/98, § 52, ECHR 2004-IX*

*պահանջը և կամայական չէ*²²: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում Եվրոպական դատարանն արդարացի հավասարակշռության առկայության հարցը քննարկելիս նախ պարզում է.

1. թե արդյո՞ք սեփականության իրավունքի սահմանափակմանն ուղղված վիճարկվող միջոցառումը նախատեսված է օրենքով կամ միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով,

2. հասարակական շահից բխող ի՞նչ իրավաչափ նպատակ է հետապնդում այդ միջոցառման կիրառումը:

Սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն պետք է «լինի պատշաճ՝ իր նպատակին հասնելու համար և համարժեք այդ նպատակին»: Համամասնության ողջամիտ հարաբերակցությունը բացակայում է, սեփականության իրավունքի պաշտպանության և ընդհանուր շահի պահանջների միջև անհրաժեշտ հավասարակշռությունը խախտվում է ի վնաս անհատի իրավունքների պաշտպանության, եթե սեփականության իրավունքը սահմանափակող միջոցառման կիրառման արդյունքում տվյալ անձն ստիպված է կրել «անհատական և չափից ավելի ծանր բեռ»²³:

Հայաստանի Հանրապետության միջամտությունը սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակմանը, բնավ չի հանդիսանում պատշաճ իր նպատակին հասնելու համար և համարժեք չէ այդ նպատակին: Սույն դեպքում նպատակը մեկն է՝ պարզել կենսաթոշակի իրավունքից օգտվող անձի ողջ լինելու հանգամանքը: Սակայն ընտրված միջոցի պատճառով ՀՀ տարածքում չբնակվող անձը կրում է «անհատական և չափից ավելի ծանր բեռ» այն առումով, որ պարտավորվում է յուրաքանչյուր տարի գալ Հայաստան և այստեղ գործող նոտարի կողմից իր ողջ լինելու փաստի հաստատման վերաբերյալ վավերացրած փաստաթուղթ ստանալ, մինչդեռ՝ նա այդ նույն փաստաթուղթը կարող է վավերացնել իր բնակության երկրի նոտարի կողմից, և փոստային ծառայության միջոցով ուղարկվել ՀՀ՝ համապատասխան լիազոր մարմնին: Նման անհամաչափ պարտականության չկատարումը առաջ է բերում բացասական հետևանքներ անձի համար, այն է՝ զրկում է կենսաթոշակ ստանալու իրավունքից, ինչը հավասարազոր է սեփականազրկման Կոնվենցիային կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Մինչդեռ, սեփականազրկման համար անհրաժեշտ է նախևառաջ դատարանի որոշում, որպիսի պայմանի բացակայության պարագայում խախտվում է անձի սեփականության պաշտպանության իրավունքը:

Այսպիսով հարց է առաջանում. արդյո՞ք համաչափ է ընտրված միջոցը՝ նպատակին հասնելու համար, և արդյո՞ք այլ միջոց հնարավոր չէր ընտրել հատկապես այն պարագայում, երբ կան մի շարք միջազգային և

²² *Iatridis v. Greece [GC], no. 31107/96, para. 54/; Öneriyıldız v. Turkey*

²³ *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, Երևան-2005, էջ 470*

տարածաշրջանային կոնվենցիաներ, որոնց համաձայն որևէ երկրում տրված պաշտոնական փաստաթուղթն ընդունվում է այլ պետության տարածքում:

VI. Պաշտոնական փաստաթղթերի ճանաչման և ընդունման կարգը.

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է մի շարք միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաների անդամ, որոնցով սահմանվում է այլ պետությունների տարածքում տրված փաստաթղթերի՝ այլ պետության տարածքում առանց որևէ օրինականացման պահանջի ընդունվելու կարգը: Այսպես, օրինակ, 1961թ. «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաագայի հոկտեմբերի 5-ի կոնվենցիայով վերացվել է օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի դիվանագիտական կամ հյուպատոսական օրինականացման պահանջը: Սույն Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոսի 14-ից: Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշվում են, թե որո՞նք են հանդիսանում պաշտոնական փաստաթղթերը:

Այսպես, 1-ին հոդվածը սահմանում է. «Սույն Կոնվենցիայի նպատակների համար պաշտոնական փաստաթղթեր են համարվում՝

ա) պետության դատարանների կամ տրիբունալների կամ դրանց հետ կապված պաշտոնատար անձանց, ներառյալ դատախազի, դատարանի քարտուղարի կամ դատական կատարածուի կողմից ընդունված փաստաթղթերը,

բ) վարչական փաստաթղթերը,

գ) նոտարական փաստաթղթերը,

դ) մասնավոր կարգավիճակով գործող անձանց կողմից ստորագրված փաստաթղթերի վրա կատարված պաշտոնական հավաստագրերը, ինչպիսին են փաստաթղթի գրանցումը կամ որոշակի ամսաթվին դրա գոյության փաստն արձանագրող պաշտոնական հավաստագրերը, ինչպես նաև ստորագրությունների պաշտոնական և նոտարական հաստատումները»:

Փաստորեն, նշված կոնվենցիայի իմաստով, նոտարական փաստաթղթերին ևս օրինականացման պահանջ չի ներկայացվում: Այսինքն, եթե անձը մեկ այլ երկրի նոտարի կողմից վավերացված փաստաթուղթ ներկայացնի իր՝ ողջ լինելու փաստի հաստատման համար, ապա Հայաստանի Հանրապետությունն առանց չարդարացված բարդություններ ստեղծելու, պետք է ընդունի այն: Իսկ դրանց չընդունումը հանգեցնում է Կոնվենցիայի պահանջների խախտման:

«Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնություն և իրավական հարաբերությունների մասին» ԱՊՀ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանվում է փաստաթղթերի վավերականությունը: Այսպես, «1. Փաստաթղթերը, որոնք Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում պատրաստվել կամ վավերացվել են մարմնի կամ հատուկ դրա համար լիազորված անձի կողմից՝ իրենց իրավասությունների շրջանակներում ու սահմանված ձևով, և ամրագրված են զինանշանային կնիքով, մյուս

Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունվում են առանց որևէ հաստուկ հավաստագրի:

Փաստաթղթերը, որոնք Պայմանավորվող կողմերի տարածքում դիտվում են որպես պաշտոնական փաստաթղթեր, Պայմանավորվող մյուս կողմերի տարածքներում օգտվում են պաշտոնական փաստաթղթերի ապացուցողական ուժից»:

Մույն Կոնվենցիան ևս մեկ անգամ հաստատում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է հստակ կարգ, որը պետությանը պարտավորեցնում է վավերական համարել այն փաստաթղթերը, որոնք տրվել են Կոնվենցիայի անդամ այլ պետության տարածքի իրավասու մարմնի կողմից: Այստեղից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական ապահովության համակարգում սահմանել է մի այնպիսի դրույթ, որն անհամաչափ է իր նպատակի համար, խոչընդոտներ է ստեղծում ՀՀ տարածքում չգտնվող անձանց համար իրենց կոնսաթոշակից անարգել օգտվելու իրավունքի իրականացման համար: Այդ խոչընդոտները ոչնչով արդարացված չեն, մանավանդ այն պարագայում, երբ գոյություն ունեն այնպիսի կոնվենցիաներ, որոնք հստակ պարտավորություններ են դրել պետությունների վրա՝ ընդունելու այլ պետության տարածքի օրինական փաստաթուղթը: Մույն դեպքում օրինական փաստաթուղթ կարող է դիտվել, օրինակ, օտարերկրյա պետության նոտարի կողմից վավերացված փաստաթուղթը՝ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձի ողջ լինելու փաստը հաստատելու նպատակի համար: Այլ անհամաչափ պարտավորություն սահմանելը հանգեցնում է սոցիալական ապահովության իրավունքից անարգել օգտվելու իրավունքի խախտման:

Եզրակացությունը.

Սոցիալական ապահովության իրավունքը, որի մի բաղադրիչն է հանդիսանում կենսաթոշակի իրավունքը, հանդիսանում է անձի կարևորագույն իրավունքներից մեկը, քանի որ սերտորեն առնչվում է անձի արժանապատվության հետ: Այդ իրավունքի իրականացման ուղղությամբ խոչընդոտող նորմեր սահմանելը հանգեցնում է պետության պոզիտիվ պարտավորությունների խախտման և անհատական ու չափից ավելի ծանր բեռ դնում այդ իրավունքներից օգտվող անձանց վրա: Այդ խոչընդոտները հանգեցնում են նաև Կոնվենցիայով սահմանված սեփականությունից անարգել օգտվելու իրավունքի խախտմանը և կարող են անգամ առաջ բերել սեփականագրկում: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է նաև մի շարք կոնվենցիաների անդամ, որոնցով սահմանվում է այլ պետությունների տարածքում նոտարական կարգով հաստատված փաստաթղթերի ընդունման կարգը Հայաստանի Հանրապետությունում, ապա այս առումով ավելի նպատակահարմար կլիներ կենսաթոշակների վճարումն անկանխիկ եղանակով՝ անձի կողմից իր ողջ լինելու վերաբերյալ իր բնակության (գտնվելու) վայրի նոտարի կողմից վավերացված փաստաթուղթը փոստային ծառայության միջոցով Հայաստայի Հանրապետության լիազոր

մարմնին ուղարկելու միջոցով: Այս միջոցը հնարավորություն կտա անձին և՛ օգտվելու իր կենսաթոշակը ստանալու իրավունքից, և՛ պետությանը ողջամիտ հնարավորություն կտրամադրվի՝ տիրապետելու կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց ողջ լինել-չլինելու վերաբերյալ տեղեկատվությանը: Միայն այս կերպ պետության կողմից կապահովվի արդար հավասարակշռություն նպատակի և նպատակին հասնելու միջոցների միջև:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան